ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N5
«ՀԱՅԱԷՐՈՆԱՎԻԳԱՑԻԱ» ՓԲԸ 26.01.2018թ. ԹԻՎ 65-Ա ՀՐԱՄԱՆՈՎ
ՍԱՀՄԱՆՎԱԾ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

«Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ
(ք. Երևան 0042, Ի. Գասպարյան 33)

15 մայիսի 2018թ,
ժամը 10:30

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝

Արայիկ Աբգարյան — գործերի կառավարման վարչության պետ

Հանձնաժողովի գնահատող անդամներ՝

Արամ Գրիգորյան — տրանսպորտի բաժնի պետ
Հակոբ Մխիթարյան — տրանսպորտի բաժնի մեխանիկ-վարորդ

Հանձնաժողովի բացող անդամներ՝

Անահիտ Աղվանյան — տրանսպորտի բաժնի դիսպետչեր
Արմեն Մարտիրոսյան — տրանսպորտի բաժնի մեխանիկ-վարորդ

Հանձնաժողովի քարտուղար՝

Մարիամ Եսայան — պլանավորման և գնումների համակարգման ծառայության մասնագետ

Օրակարգ

«Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ գլխավոր տնօրենի 2018թ. ապրիլի 25-ի N 8.1-179 և Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր ՔԱԳՎ պետի 2018թ.մայիսի 14-ի N Մտից-487 գրությունների քննարկում:

Քննարկման արդյունքում հանձնաժողովը միաձայն որոշեց՝

1. Առաջնորդվելով ՀՀ Կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N526 որոշմամբ հաստատված կարգի 58-րդ կետի պահանջներով՝ «Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ կարիքների համար տրանսպորտային միջոցների ձեռքբերման նպատակով «ՀԱՆ-ԳՀԱՊՁԲ-01/18» ծածկագրով կազմակերպվածգնման ընթացակարգը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի1-ին մասի 2-րդ կետի հիման վրա ամբողջությամբ հայտարարել չկայացած:
2. Սույն արձանագրությամբ ընդունված որոշման մասին տեղեկացնել շահագրգիռ անձանց:

«Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ գլխավոր տնօրենի 2018թ. ապրիլի 25-ի N 8.1-179 և Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր ՔԱԳՎ պետի 2018թ.մայիսի 14-ի N Մտից-487 գրությունները կցված են:

Արայիկ Աբգարյան

Արամ Գրիգորյան

Հակոբ Մխիթարյան

Անահիտ Աղվանյան

Արմեն Մարտիրոսյան

Մարիամ Եսայան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՎԻԱՑԻԱՅԻ ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ
«ՀԱՅԱԷՐՈՆԱՎԻԳԱՑԻԱ» ՓԲԸ

GENERAL DEPARTMENT OF CIVIL AVIATION AT THE GOVERNMENT OF RA, CJSC "ARMATS"
ЗАО "АРМАЭРОНАВИГАЦИЯ" ГЛАВНОЕ УПРАВЛЕНИЕ ГРАЖДАНСКОЙ АВИАЦИИ ПРИ ПРАВИТЕЛЬСТВЕ РА

bsi. ISO 9001 Quality Management

I.Gasparyan 33, Yerevan 0042, RA,
tel.(37410) 281597,fax.(37410) 284142

№ 8.1- 179

«25» 04 2018

ՀՀ կառավարությանն առընթեր
քաղաքացիական ավիացիայի
գլխավոր վարչության պետ
պարոն Ս. Ավետիսյանին

Հարգելի պարոն Ավետիսյան,

Համաձայն ՀՀ կառավարության 2018թ. մարտի 15-ի N253-Ն որոշման «Զվարթնոց» ավիաօդերևութաբանական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությունը պետք է վերակազմակերպվի՝ «Հայաէրոնավիգացիա» փակ բաժնետիրական ընկերությանը միացնելու ձևով: Ընկերությունների միցումից հետո «Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ-ն հանդիսանալու է «Զվարթնոց» ավիաօդերևութաբանական կենտրոն» ՓԲԸ-ի իրավահաջորդը և պետք է շարունակի իրականացնել վերջինիս գործառույթները, որի համար անհրաժեշտ է լինելու ընկերության կողմից 2018 թվականի ընթացքում կատարելու լրացուցիչ ծախսեր: Միաժամանակ «Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ-ն նշված գործառույթներն իրականացնելու է աերոնավիգացիոն ծառայությունների մատուցման համար գործող սակագների շրջանակում և նշված ծառայության մատուցման համար լրացուցիչ գումարներ չեն վճարվելու:

Հաշվի առնելով վերոնշյալը, «Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ-ի 2018 թվականի ծախսերի նախահաշվով և զարգացման ծրագրով նախատեսված ֆինանսական արդյունքներն ապահովելու նպատակով, «Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ-ի 20.04.2018թ. արտահերթ վարչության նիստում քննարկվել է 2018 թվականի ընթացքում իրականացվելիք ծախսերի և ներդրումների հնարավոր կրճատման հարցը: Քննարկման արդյունքում նշված հարցի վերաբերյալ ընդունվել է հետևյալ որոշումը.

«Հաշվի առնելով, որ ՀՀ կառավարության 2018թ. մարտի 15-ի N253-Ն որոշմամբ «Զվարթնոց» ավիաօդերևութաբանական կենտրոն» ՓԲԸ-ն «Հայաէրոնավիգացիա» ՓԲ ընկերությանը միացման արդյունքում «Զվարթնոց» ավիաօդերևութաբանական կենտրոն» ՓԲԸ-ից «Հայաէրոնավիգացիա» ՓԲ ընկերությանն են փոխանցվելու տրանսպորտային միջոցներ, ուստի նախատեսված թվով երեք տրանսպորտային միջոցների գնումը համարել

աննպատակահարմար և ոչ անհրաժեշտ, իսկ դրանց գծով նախատեսված ֆինանսական միջոցներն ուղել միացման արդյունքում առաջացած անհրաժեշտ ծախսերի կատարմանը:

Հետևաբար, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 58-րդ կետի պահանջներով անհրաժեշտ է դիմել ՀՀ ԿԱ ՔԱԳՎ պետին՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիման վրա «Հայաերոնավիգացիա» ՓԲԸ-ի կարիքների համար տրանսպորտային միջոցների ձեռքբերման նպատակով կազմակերպված գնման ընթացակարգը ամբողջությամբ չկայացած հայտարարելու առաջարկությամբ»:

Հաշվի առնելով վերոնշյալը և ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 58-րդ կետի պահանջներով, առաջարկում ենք «Հայաերոնավիգացիա» ՓԲԸ-ի կարիքների համար տրանսպորտային միջոցների ձեռքբերման նպատակով «ՀԱՆ-ԳՀԱՊՁԲ-01/18» ծածկագրով կազմակերպված գնման ընթացակարգը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիման վրա ամբողջությամբ հայտարարել չկայացած:

Կից ներկայացնում ենք 20.04.2018թ.-ի «Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ-ի արտահերթ վարչության նիստի թիվ 3-18 արձանագրությունը:

Առդիր՝ 3 թերթ:

Հարգանքով՝

Ա. Գասպարյան
գլխավոր տնօրեն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՎԻԱՑԻԱՅԻ ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ

«Զվարթնոց» օդանավակայան, Երևան 0042, ՀՀ, Հեռ.՝ (37410) 28-07-22, էլ. փոստ՝ gdca@gdca.am

N _____

«_____» _____ **2018 թ.**

<<ՀԱՅԱԷՐՈՆԱՎԻԳԱՑԻԱ>> ՓԱԿ
ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ
ՊԱՐՈՆ ԱՐԹՈՒՐ ԳԱՍՊԱՐՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Գասպարյան,

Ի պատասխան Ձեր 2018 թվականի ապրիլի 25-ի թիվ 8.1-179 գրության՝ <<Հայաէրոնավիգացիա>> փակ բաժնետիրական ընկերության կարիքների համար տրանսպորտային միջոցների ձեռքբերման նպատակով <<ՀԱՆ-ԳՀԱՊՁԲ-01/18>> ծածկագրով կազմակերպված գնման ընթացակարգը ամբողջությամբ չկայացած հայտարարելու առաջարկության վերաբերյալ առարկություններ չունենք:

Հարգանքով՝

ՍԵՐԳԵՅ ԱՎԵՏԻՍՅԱՆ

Կատարող՝ Կ.Մարտիրոսյան
/060/434-278